2008 թվականի հունվար -նոյեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջեի կատարման ամփոփ բնութագիրը[1]

2008 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջեի եկամուտները կազմել են ավելի քան 695.3 մլրդ դրամ, իսկ ծախսերը՝ 673.1 մլրդ դրամ, որոնք համապատասխանաբար 90.4%-ով եւ 84.7%-ով ապահովել են տարեկան ծրագրային ցուցանիշների կատարումը:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պետական բյուջեի եկամուտներն ավելացել են 19.1%-ով կամ ավելի քան 111.6 մլրդ դրամով: Ընդ որում, 21.3%-ով կամ 100.9 մլրդ դրամով ավելացել են հարկերը եւ տուրքերը, 18.4%-ով կամ 14.4 մլրդ դրամով՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարները, 93.6%-ով կամ 1.7 մլրդ դրամով՝ պաշտոնական դրամաշնորհները, իսկ այլ եկամուտները (նախկինում՝ ոչ հարկային եկամուտներ) նվազել են 17.6%-ով կամ 5.4 մլրդ դրամով: Արդյունքում՝ եկամուտների կազմում 1.5 տոկոսային կետով աճել է հարկերի եւ տուրքերի, 0.2 տոկոսային կետով՝ պաշտոնական դրամաշնորհների տեսակարար կշիռը, իսկ պարտադիր սոցիալական ապահովության վճարների եւ այլ եկամուտների տեսակարար կշիռները նվազել են համապատասխանաբար 0.1 եւ 1.6 տոկոսային կետով:

Պետական բյուջեի եկամուտների զգալի մասը՝ 79.5%-ը ձեւավորվել է հարկային մուտքերի հաշվին, 2.9%-ը՝ պետական տուրքի, 13.3%-ը՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարների, 0.5%-ը՝ պաշտոնական դրամաշնորհների եւ 3.7%-ը՝ այլ եկամուտների հաշվին: «Հայաստանի Հանրապետության 2008 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 18-րդ կետին համապատասխան պետական բյուջեում ներառվել են նաեւ պետական հիմնարկների արտաբյուջետային ֆոնդերի միջոցները, որոնց եկամուտները հաշվետու ժամանակահատվածում կազմել են շուրջ 15 մլրդ դրամ՝ նախորդ տարվա 12.6 մլրդ դրամի դիմաց:

Անցած ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտները կազմել են շուրջ 553.1 մլրդ դրամ՝ 90.6%-ով ապահովելով տարեկան ծրագիրը: 2007 թվականի նույն

---

[1] - Պետական բյուջեի եկամուտներում, ծախսերում եւ պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներում ներառված չեն արտաքին աղբյուրներից ֆինանսավորվող նպատակային ծրագրեր իրականացնող գրասենյակներով շրջանառվող միջոցները:

- 2008 թվականից ՀՀ պետական բյուջեն կազմվել է «Պետական ֆինանսների վիճակագրություն-2001» (GFS-2001) ձեռնարկի դասակարգմանը համապատասխան, նաեւ պետական բյուջեում ներառվել է ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի բյուջեն, ուստի նախորդ տարվա հետ համեմատություններում հաշվի են առնվել նշված փոփոխությունները:

- 2008 թվականին արտահանողներին ԱԱՀ-ի վերադարձի գումարներն արտացոլվել են ծախսերում, ի տարբերություն նախորդ տարվա, երբ դրանք պակասեցվում էին եկամուտներից, ուստի երկու տարիների ցուցանիշների համադրելիությունն ապահովելու նկատառումով 2007 թվականի եկամուտների եւ ծախսերի ցուցանիշները նշված գումարի չափով (11,685.1 մլն դրամ) ավելացվել են:

ժամանակահատվածի համեմատ հարկային եկամուտներն աճել են 22.2%-ով կամ 100.6 մլրդ դրամով[2]: Ընդ որում, գրեթե բոլոր հարկատեսակների գծով արձանագրվել է աճ, բացառությամբ պարզեցված հարկի:

Հաշվետու ժամանակահատվածում ավելացված արժեքի հարկը կազմել է ավելի քան 297.4 մլրդ դրամ՝ ապահովելով հարկային եկամուտների 53.8%-ը: Նշված գումարից 193.3 մլրդ դրամը ստացվել է ՀՀ սահմանին հարկումից, 104.1 մլրդ դրամը՝ ապրանքների եւ ծառայությունների ներքին շրջանառությունից: 2007 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ պետական բյուջե մուտքագրված ԱԱՀ-ն աճել է 24.6%-ով կամ ավելի քան 58.6 մլրդ դրամով: Ընդ որում, ավելացել են եւ՛ ներմուծումից, եւ՛ ներքին շրջանառությունից ստացվող գումարները:

Հաշվետու ժամանակահատվածում ակցիզային հարկի մուտքերը կազմել են ավելի քան 42.6 մլրդ դրամ՝ ապահովելով հարկային եկամուտների 7.7%-ը: Մասնավորապես՝ նշված գումարից ավելի քան 31 մլրդ դրամը ստացվել է հանրապետություն ներմուծված ենթաակցիզային ապրանքների հարկումից, որից 15.2 մլրդ դրամը՝ բենզինի եւ դիզելային վառելիքի, 11.5 մլրդ դրամը՝ ծխախոտի ներմուծումից: Հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների հարկումից պետական բյուջեի մուտքերը կազմել են 11.6 մլրդ դրամ, որից 5.5 մլրդ դրամը ստացվել է ներքին արտադրության ծխախոտի իրացումից: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ակցիզային հարկի մուտքերն աճել են 13.4%-ով կամ 5 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է բենզինի, ինչպես նաեւ ծխախոտի ներմուծումից եւ տեղական արտադրության ծխախոտի իրացումից ստացված մուտքերի աճով: Ակցիզային հարկի աճ է արձանագրվել նաեւ ներմուծվող եւ ՀՀ-ում արտադրվող որոշ տեսակի ալկոհոլային խմիչքների գծով:

Անցած ժամանակահատվածում պետական բյուջեի հարկային եկամուտների 14.3%-ն ապահովվել է շահութահարկի հաշվին՝ կազմելով շուրջ 79.1 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ շահութահարկի մուտքերն աճել են 20.4%-ով կամ շուրջ 13.4 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է ոչ պետական կազմակերպությունների, նվազագույն շահութահարկի վճարման պահանջից ելնելով՝ մեկ տոկոս դրույքաչափով վճարումների եւ ֆինանսավարկային կազմակերպությունների վճարած շահութահարկի աճով:

2008 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե մուտքագրված եկամտահարկը կազմել է ավելի քան 47.3 մլրդ դրամ՝ կազմելով հարկային եկամուտների 8.6%-ը: Այն 17.3%-ով կամ շուրջ 7 մլրդ դրամով գերազանցել է նախորդ տարվա նույն

[2] Հանքարդյունահանման լիցենզառուների եւ հանքարդյունահանման հատուկ լիցենզառուների կողմից վճարվող ռոյալթին եւ կոնցեսիոն վճարները, որոնք 2007 թվականին հաշվառվում էին որպես ոչ հարկային եկամուտներ, 2008 թվականին ներառվել են հարկային եկամուտներում, ուստի 2007 եւ 2008 թվականների ցուցանիշների համադրելիության նպատակով 2007 թվականի ցուցանիշներում նույնպես կատարվել են համապատասխան փոփոխություններ:

ժամանակահատվածի ցուցանիշը: Աճի հիմնական աղբյուր են հանդիսացել աշխատավարձը եւ դրան հավասարեցված այլ վճարումները, որոնք 6.7 մլրդ դրամով գերազանցել են նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը:

Հաշվետու ժամանակահատվածում հարկային եկամուտներից առավելագույն աճ է արձանագրել մաքսատուրքը: Այն կազմել է ավելի քան 34.3 մլրդ դրամ՝ 56.2%-ով կամ 12.4 մլրդ դրամով գերազանցելով 2007 թվականի նույն ժամանակահատվածի ցուցանիշը եւ ապահովելով պետական բյուջեի հարկային եկամուտների 6.2%-ը:

Հաշվետու ժամանակահատվածում գործունեության առանձին տեսակներից գանձված հաստատագրված վճարները կազմել են ավելի քան 18.4 մլրդ դրամ՝ 13%-ով կամ 2.1 մլրդ դրամով գերազանցելով 2007 թվականի նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշը: Այն հիմնականում պայմանավորված է տրանսպորտային միջոցների գազալցման, առեւտրի իրականացման վայր կազմակերպելու եւ առեւտրական գործունեության, խաղատների գործունեության, հանրային սննդի ոլորտում գործունեության կազմակերպումից, ինչպես նաեւ դրամական շահումով խաղային ավտոմատների շահագործումից ստացված մուտքերի աճով:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել շուրջ 6.1 մլրդ դրամ պարզեցված հարկ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այն նվազել է 32%-ով կամ 2.9 մլրդ դրամով՝ պայմանավորված «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխություններով, որոնցով 2008 թվականի հունվարի 1-ից կրճատվել են պարզեցված հարկի գործունեության տեսակները, ինչպես նաեւ նախատեսվել են սահմանափակումներ առեւտրային գործունեություն իրականացնող կազմակերպությունների եւ անհատ ձեռնարկատերերի համար:

Բնօգտագործման եւ բնապահպանական վճարներից պետական բյուջեի մուտքերը կազմել են ավելի քան 8.7 մլրդ դրամ՝ 5.7%-ով կամ 469.3 մլն դրամով գերազանցելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Աճը հիմնականում պայմանավորված է այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներից ՀՀ օդային ավազան վնասակար նյութեր արտանետելու եւ շրջակա միջավայրին վնաս պատճառող ներմուծվող ապրանքների համար մաքսային մարմինների կողմից գանձված բնապահպանական վճարների ավելացմամբ: Նախորդ տարվա համեմատ որոշ վճարների գծով արձանագրվել է նաեւ մուտքերի անկում: Մասնավորապես՝ 35.9%-ով նվազել են ավտոտրանսպորտից արտանետվող վնասակար նյութերի համար գանձվող բնապահպանական վճարները:

2008 թվականի հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջե են մուտքագրվել ավելի քան 19 մլրդ դրամի այլ հարկեր: Մասնավորապես, 6.9 մլրդ դրամ են կազմել «Կոնցեսիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված ռոյալթին եւ կոնցեսիոն վճարները, շուրջ 3.8 մլրդ դրամ՝ ճանապարհային վճարները, 5.4 մլրդ դրամ՝ հանրային ծառայությունների

կարգավորման պարտադիր վճարները, 2.1 մլրդ դրամ՝ հարկային օրենսդրությունը խախտելու համար «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված տույժերն ու տուգանքները, 864.8 մլն դրամ՝ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության նյութական խրախուսման եւ սոցիալական զարգացման ֆոնդի եկամուտները: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այլ հարկերն ավելացել են 30.8%-ով կամ 4.5 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է «Կոնցեսիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումներով եւ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարներով:

2008 թվականի հունվար-նոյեմբեր ժամանակահատվածում պետական տուրքի գծով բյուջետային եկամուտները կազմել են ավելի քան 20.4 մլրդ դրամ՝ 90.1%-ով ապահովելով տարեկան ծրագիրը: 2007 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ պետական տուրքն աճել է 1.4%-ով կամ 283.4 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է օդային տրանսպորտի միջոցով ֆիզիկական անձանց ելքի, ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների, գործունեության որոշ տեսակների լիցենզավորման, ինչպես նաեւ հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների համար գանձվող տուրքերի աճով: Նախորդ տարվա համեմատ տուրքերի որոշ տեսակների գծով արձանագրվել է մուտքերի անկում: Մասնավորապես՝ 27.1%-ով կամ 1.1 մլրդ դրամով նվազել են պետական գրանցման համար վճարված տուրքերը:

2008 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով բյուջետային եկամուտները կազմել են ավելի քան 92.8 մլրդ դրամ՝ 88.5%-ով ապահովելով տարեկան ծրագրի կատարումը: 2007 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ պարտադիր սոցիալական ապահովության վճարներն աճել են 18.4%-ով կամ ավելի քան 14.4 մլրդ դրամով:

Հաշվետու ժամանակահատվածում ստացվել են շուրջ 3.6 մլրդ դրամի պաշտոնական դրամաշնորհներ՝ կազմելով տարեկան ծրագրի 41.7%-ը: Մասնավորապես՝ նշված գումարից ավելի քան 2.3 մլրդ դրամը տրամադրվել է Եվրոպական հարևանության շրջանակներում ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների ֆինանսավորման նպատակով, 531.3 մլն դրամը՝ Հայաստանի Հանրապետության ու Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության միջեւ ստորագրված՝ աղքատության հաղթահարման նպատակով բյուջեին աջակցության մասին փոխըմբռնման հուշագրի շրջանակներում, 341.6 մլն դրամ ստացվել է «Պարենային արտադրության աճ» ծրագրի շրջանակներում Ճապոնիայի կառավարության կողմից տրամադրված ապրանքանյութական արժեքների դրամայնացումից, 118.8 մլն դրամ ստացվել է Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության միջեւ կնքված փոխըմբռնման հուշագրի համաձայն Գեղարքունիքի եւ Տավուշի մարզերում իրականացվող զարգացման ծրագրերի

շրջանակներում, եւ 244.8 մլն դրամ են կազմել պետական հիմնարկների արտաբյուջետային միջոցները:

Պետական բյուջեի այլ եկամուտները 2008 թվականի հաշվետու ժամանակահատվածում կազմել են ավելի քան 25.4 մլրդ դրամ՝ 110.8%-ով ապահովելով տարեկան ծրագիրը: Ծրագրի գերազանցումը հիմնականում պայմանավորված է բանկերում եւ այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից եւ դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների բարձր ցուցանիշով՝ նախատեսված 350 մլն դրամի դիմաց ստացվել է ավելի քան 5.4 մլրդ դրամ: Ծրագրի զգալի գերազանցում է արձանագրվել նաեւ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումից մուտքերում, որոնք նախատեսված 70 մլն դրամի դիմաց կազմել են 500.1 մլն դրամ, եւ իրավաբանական անձանց կապիտալում կատարված ներդրումներից ստացվող շահաբաժինների գծով, որոնց տարեկան ծրագիրն արդեն իսկ ավելի քան կրկնակի չափով գերակատարվել է: 2007 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ այլ եկամուտները նվազել են 17.6%-ով կամ 5.4 մլրդ դրամով: Վերջինս պայմանավորված է 2007 թվականին «Արմենթել» ՓԲԸ-ի հետ կնքված հաշտության համաձայնությամբ 4.6 մլրդ դրամի եւ «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ-ի մասնավորեցման արդյունքում 6.8 մլրդ դրամի վճարումներով: Առանց նշված գումարների 2007 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ այլ եկամուտներն ունեցել են 31.1% կամ ավելի քան 6 մլրդ դրամ աճ, որը հիմնականում պայմանավորված է պետական հիմնարկների արտաբյուջետային մուտքերի, բանկերում եւ այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից եւ դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների, իրավախախտումների համար կիրառվող պատժամիջոցներից ստացվող մուտքերի եւ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումից մուտքերի աճով:

2008 թվականի հունվար-նոյեմբեր ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին կատարվել են ավելի քան 673.1 մլրդ դրամի ծախսեր՝ կազմելով Կառավարության տարեկան ծրագրի 84.7%-ը: Մասնավորապես՝ 572.2 մլրդ դրամ կազմել են ընթացիկ ծախսերը, 100.9 մլրդ դրամ՝ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները: Ծախսերի կատարողականի վրա նվազեցնող ազդեցություն է գործել ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի կատարողականի համեմատաբար ցածր ցուցանիշը, որը կազմել է 76.3%: 2007 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ պետական բյուջեի ծախսերն ավելացել են 24.3%-ով կամ 131.4 մլրդ դրամով:

Հունվար-նոյեմբեր ամիսներին կատարվել է ընթացիկ ծախսերի տարեկան ծրագրի 86.8%-ը՝ կազմելով 572.2 մլրդ դրամ: Ընթացիկ ծախսերից 49.8 մլրդ դրամն ուղղվել է պետական

հիմնարկների աշխատողների աշխատավարձերի վճարմանը՝ կազմելով տարեկան ծրագրի 83.3%-ը: Պարտադիր սոցիալական ապահովության վճարներին տրամադրվել է 4.2 մլրդ դրամ կամ տարեկան ծրագրային ցուցանիշի 80.6%-ը: Ծառայությունների եւ ապրանքների ձեռք բերմանը պետական բյուջեից տրամադրվել է 113.5 մլրդ դրամ, որը կազմել է ծրագրի 81.3%-ը:

Հունվար-նոյեմբեր ժամանակահատվածում ավելի քան 10.1 մլրդ դրամ է հատկացվել պետական պարտքի սպասարկմանը՝ կազմելով ծրագրի 86.7%-ը: Մասնավորապես՝ նշված գումարից 7.1 մլրդ դրամ տրամադրվել է ներքին, շուրջ 3.1 մլրդ դրամ՝ արտաքին պարտքի սպասարկմանը, որոնք կազմել են տարեկան ծրագրի համապատասխանաբար 87.1 եւ 85.7 տոկոսը: 2007 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ պետական պարտքի սպասարկման ծախսերն աճել են 16.2%-ով՝ հիմնականում պայմանավորված ներքին պետական պարտքի սպասարկման ծախսերի աճով:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեից տրամադրվել են ավելի քան 20.1 մլրդ դրամ սուբսիդիաներ՝ 90.4%-ով ապահովելով ծրագրի կատարումը:

Պետական բյուջեի ընթացիկ ծախսերի 13.4%-ը կամ 76.8 մլրդ դրամ կազմել են դրամաշնորհները, որոնց տարեկան ծրագիրը կատարվել է 92.8%-ով: Նշված գումարից 66.4 մլրդ դրամը (տարեկան ծրագրով նախատեսվածի 93.8%-ը) պետական հատվածի այլ մակարդակներին տրամադրված դրամաշնորհներն են: Մասնավորապես՝ 19.2 մլրդ դրամ կազմել են պետական բյուջեից համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները, որոնց տարեկան ծրագիրը կատարվել է 91.7%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեի ընթացիկ ծախսերի 33.2%-ն ուղղվել է սոցիալական նպաստներին եւ կենսաթոշակներին, որոնք կազմել են 189.9 մլրդ դրամ կամ նախատեսվածի 90%-ը: Մասնավորապես՝ 141.1 մլրդ դրամ է տրամադրվել կենսաթոշակների, 48.8 մլրդ դրամ՝ նպաստների վճարմանը:

2008 թվականի հունվար-նոյեմբեր ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները կազմել են 100.9 մլրդ դրամ կամ տարեկան ծրագրի 74.2%-ը: Մասնավորապես՝ շուրջ 119.9 մլրդ դրամ են կազմել ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը՝ ապահովելով տարեկան ծրագրի 76.3% կատարողական, եւ 18.9 մլրդ դրամ՝ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերը, որոնց ծրագիրը կատարվել է 89.5%-ով: 2007 թվականի հունվար-նոյեմբեր ամիսների համեմատ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերն աճել են 8.7%-ով:

2008 թվականի հունվար-նոյեմբեր ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեն (առանց արտաքին աղբյուրներից ֆինանսավորվող վարկային ծրագրերի գծով միջոցների ներհոսքի) կատարվել է 22.2 մլրդ դրամ հավելուրդով՝ տարեկան ծրագրով նախատեսված 25.9 մլրդ դրամ պակասուրդի դիմաց: Ֆինանսավորման ներքին աղբյուրները կազմել են -65.8 մլն դրամ՝ նախատեսված 50.6 մլրդ դրամի եւ նախորդ տարվա -28.1 մլրդ դրամի դիմաց: Նույն

ժամանակահատվածում արտաքին աղբյուրների գծով արձանագրվել է հավելուրդ 22.1 մլրդ դրամի չափով՝ նախատեսված 24.7 մլրդ դրամի եւ նախորդ տարվա 13.9 մլրդ դրամի դիմաց:

Պակասուրդի ֆինանսավորման ներքին աղբյուրներում 20.6 մլրդ դրամ են կազմել փոխառու միջոցներից զուտ մուտքերը, որոնց ծրագրի կատարողականը կազմել է 84.1%: Մասնավորապես՝ 20.7 մլրդ դրամ են կազմել արժեթղթերի թողարկումից զուտ մուտքերը եւ 614 մլն դրամ՝ ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից ներքին վարկերի մարման նպատակով կատարված հատկացումը: Հաշվետու ժամանակահատվածում 20.1 մլրդ դրամ հավելուրդ է արձանագրվել ֆինանսական ակտիվներից զուտ մուտքերի գծով՝ նախատեսված 26.7 մլրդ դրամ ֆինանսավորման փոխարեն, որը պայմանավորված է ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցման, ինչպես նաեւ բաժնետոմսերի եւ կապիտալում այլ մասնակցության իրացումից նախատեսված միջոցները եւ բյուջեի տարեսկզբի ու ժամանակավոր ազատ միջոցները չօգտագործելու հանգամանքով:

Ֆինանսական ակտիվների գծով 107.1 մլն դրամի վարկեր են տրամադրվել բռնադատված քաղաքացիներին՝ անհատական բնակարանային շինարարություն իրականացնելու նպատակով: 252.8 մլն դրամ հատկացվել է բաժնետոմսերի եւ կապիտալում այլ մասնակցության ձեռք բերման նպատակով: 279.7 մլն դրամ մուտքագրվել է նախկինում տրամադրված վարկերի վերադարձից: Հաշվետու ժամանակահատվածում 20 մլրդ դրամով ավելացել են ազատ բյուջետային միջոցները՝ նախատեսված 12.9 մլրդ դրամ օգտագործման փոխարեն:

Հունվար-նոյեմբեր ամիսների ընթացքում պակասուրդի ֆինանսավորման նպատակով Աղքատության հաղթահարման աջակցության չորրորդ վարկային ծրագրի շրջանակներում Համաշխարհային բանկի կողմից տրամադրվել է 6.4 մլրդ դրամ: Արտաքին պարտավորությունների մարմանը հաշվետու ժամանակահատվածում ուղղվել է շուրջ 4.4 մլրդ դրամ, որից 3.7 մլրդ դրամ հատկացվել է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ծրագրերի գծով պարտքի մարմանը, 561.8 մլն դրամ՝ ԱՄՆ ապրանքային վարկերի մարմանը, 132.5 մլն դրամ՝ Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող ծրագրերի գծով պարտքի մարմանը եւ 28.9 մլն դրամ՝ Ֆրանսիայի նկատմամբ ԱԷԿ-ի վառելիքի չոր պահպանման ծրագրի գծով պարտքի մարմանը: 2008 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջեից 24.1 մլրդ դրամ միջպետական վարկ է տրամադրվել ԼՂՀ-ին, որը 32.8%-ով գերազանցել է նախորդ տարվա նույն ցուցանիշը: Ֆինանսավորման արտաքին աղբյուրներում Վրաստանի կողմից միջպետական վարկի գծով ընթացիկ տարում նախատեսված 60.4 մլն դրամից 28.8 մլն դրամը հաշվետու ժամանակահատվածում վճարվել է: